կուրծքը, յետոյ, երկու կողմից տարածելով, հասնում էր ուսերին եւ ապա բարձրանում էր դէպի ականջները եւ վերջը անհետանում էր մի կեղտոտ, լրջագոյն ֆէսի տակ: Նրա մօրուքը հնդկահաւի բացուած պոչի տպաւորութիւն էր գործում, որի միջնավայրում երեւում էր մի փոքրիկ, ողորմելի երես, նեղ, անհանգիստ աչքերով:

Մեր հարցին, թէ կա՞ն արդեօք սենեակներ գիշերելու համար, նա պատասխանեց՝ «տեսնեմ»... եւ անյայտացաւ ժամաւորների մէջ: Կարծես թէ ինքը չգիտէր եւ նոր պէտք է տեղեկանար, արդեօք սենեակներ կային, թէ ոչ:

Երկար սպասելուց յետոյ, վերջապէս տեսանք, որ մօրուքը բակի միւս ծայրում խօսում էր տէրտէրի հետ, որը, այդ գաղտնի խորհրդակցութիւնից յետոյ, բարեհաճեց մօտենալ մեզ: Եթէ ճշմարիտ է ժողովրդական կարծիքը, թէ ձրի հացը մարդուն գերցնում է, պարարտացնում է, այդ կէտից նայելով, պէտք էր ընդունել, որ տէր հօր վրայ շատ բարերար ազդեցութիւն էր գործել: Նրա երկու ձեռքերի ծայրերը հազիւ հասնում էին միմեանց, եւ ահագին փորի վրայ դարձնում էին «տեր-ողորմեայի» սեւ հատիկները, որոնց մէջ տէր-հայրը, երեւի, վայելչութեան համար, կարմիրներ եւս խառնել էր: Հակառակ իր երեցփոխանին, նա կրում էր խիստ թեթեւ մօրուք, եւ ծնօտների բաց մնացած կաշին պարարտութիւնից փայլում էր մուգ-աղիւսի գոյնով: Արիւնով լի աչքերը, կարծես ուզում էին դուրս թռչել իրանց բոյներից: Նա մօտենում էր մեզ դանդաղ քայլերով եւ միեւնոյն ժամանակ ծանր շունչ էր առնում: Մեր զարմանքը մեծ եղաւ, երբ այդ ահագին մարմնի միջից լսեցաւ մի երեխայի հազիւ լսելի ձայն:

— Բարէողջոյն ձեր հրամանոցը... առակն անխոտելի է... կասեն՝ հազարից մէկ անգամ զատիկ կլինի... եւ այն օրն էլ ձիւն կգա... Մեր եկեղեցին, շատ տարի է, որ հիւր չէ ունեցել... այսօր հիւր եկաւ, սենեակ չկա... Ապրի մեր ժողովուրդը... փառք աստծոյ, ի՞նչ էր պակաս... սենեակներ կային... բայց անցեալ տարի մեր մեղքից շատ անձրեւներ եկան... կտուրները փլան... դեռ այնպէս մնում են ու կմնան...

Պէտք է շատ երկար սպասել, մինչեւ տէր հայրը, շունչ առնելով, փսփսալով, երբեմն դէպի մեզ եւ երբեմն դէպի իր ժամաւորները նայելով, կը վերջացնէր իր երկար բացատրութիւնները: Բայց նրա խօսքը ընդհատեց մի մարդ, որ մօտեցաւ մեզ եւ առաջարկեց իր հիւրասիրութիւնը, ասելով.

— Նոաստիս տունը շատ հեռու չէ եկեղեցուց, եթէ կը բարեհաճէիք, ինձ մեծ պատիւ արած կը լինէիք, եթէ այդ գիշերը իմ ծածկի տակ կանցկացնէիք: